ԱՌՈՂՋ.am
Առողջության համընդհանուր
ապահովագրության հիմնադրամ

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուղերձ 2-3

Հոգաբարձուների խորհրդի կազմ 4

Առաքելություն և տեսլական 5-6

Վիճակագրություն 7-20

Կանխարգելիչ ծրագրեր 21

Ռազմավարական համագործակցություն 22

Զարգացում և ուսուցում 23

Ռազմավարական ուղի՝ ապագայի տեսլականը և նպատակը 24

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀՀ առողջապահության նախարար

Հարգելի՛ գործընկերներ,

Առողջության համընդհանուր ապահովագրության ներդրումը Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգի կարևորագույն բարեփոխումներից մեկն է, որի նպատակն է յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովել անհրաժեշտ առողջապահական ծառայությունների հասանելիություն՝ անկախ սոցիալական կարգավիճակից: Այս նպատակին հասնելու համար կարևոր է ոչ միայն ծառայությունների ֆինանսավորումը, այլև կանխարգելման մշակույթի ձևավորումը, որակյալ բժշկական օգնության ապահովումը և համակարգի նկատմամբ հանրային վստահության շարունակական ամրապնդումը: Առողջության համընդհանուր ապահովագրության համակարգը երկարաժամկետ ներդրում է երկրի մարդկային կապիտալի, հանրային առողջության և սոցիալական բարեկեցության մեջ:

Հաշվետու ժամանակահատվածում մենք շարունակել ենք համակարգի ինստիտուցիոնալ ամրապնդմանն ուղղված նախաձեռնությունները՝ ծառայությունների կազմակերպման գործընթացների կատարելագործումը, թվային գործիքների զարգացումը, տեղեկատվության հասանելիության բարելավումը և գործընկեր կառույցների հետ համագործակցության ընդլայնումը:

Զուգահեռաբար շարունակվել են միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման և տեղայնացման աշխատանքները՝ նպաստելով առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի արդյունավետության բարձրացմանը: Շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն անձանց, ովքեր իրենց ամենօրյա աշխատանքով նպաստում են այս կարևոր բարեփոխման իրականացմանը: Համոզված եմ, որ համատեղ ջանքերի, մասնագիտական նվիրվածության և հետևողական աշխատանքի շնորհիվ կձևավորենք ավելի հասանելի, արդար և կայուն առողջապահական համակարգ՝ ի շահ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու:

Հարգելի՛ գործընկերներ և շահառուներ,

2026 թվականի հունվարից հունիս ընկած ժամանակահատվածը կարևոր փուլ էր Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի համար: Այս ընթացքում մենք ձևավորել ենք առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի կայացման համար անհրաժեշտ հիմքերը, զարգացրել համագործակցությունը մասնագիտական և միջազգային գործընկերների հետ: Այս պահի դրությամբ առողջության համընդհանուր ապահովագրության համակարգում ընդգրկված է **ավելի քան 1.8 մլն քաղաքացի**, ինչը զգալի ցուցանիշ է:

Հիմնադրամի գործունեության երկրորդ եռամսյակում մեկնարկել են նոր ծրագրեր, իրականացվել են գործընթացների կատարելագործման և թվայնացման աշխատանքներ, իսկ մեր թիմը շարունակել է աշխատել մեկ նպատակի շուրջ՝ ձևավորել ավելի հասանելի, արդյունավետ և մարդակենտրոն առողջապահական համակարգ:

Շնորհակալ եմ բոլոր գործընկեր կազմակերպություններին և շահառուներին վստահության համար:

Արձանագրված արդյունքները հիմք են հետագա զարգացման համար, և մենք շարունակելու ենք հետևողական աշխատանքը՝ առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի կայացման և կատարելագործման ուղղությամբ:

ՍԱՄՎԵԼ ԽԱՐԱԶՅԱՆ

Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները կատարող

Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամ

Հոգաբարձուների խորհուրդը հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինն է:

Թումաս Պալու

Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ուկրաինայի գրասենյակի խորհրդական

Արտաշես Տոնոյան

Երևանում Առևտրի համաշխարհային կենտրոնի գլխավոր գործադիր տնօրեն

Շանթ Շըխրտմեան

Կալիֆոռնիական համալսարանի Լոս Անջելեսի հիվանդանոցի մանկական վիրաբուժության ղեկավար

Վարդուհի Պետրոսյան

Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի դեկան

Խուդամ Ռոստոմեան

«Կաիզեր Պերմանենտե» ընկերության տարածքային ղեկավար

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ



Հայաստանում յուրաքանչյուր ապահովագրված անձի համար ապահովել որակյալ բուժօգնության հասանելիություն և ֆինանսական պաշտպանվածություն առողջապահական ծախսերից:

ՏԵՍԼԱԿԱՆ



Հայաստանի **յուրաքանչյուր քաղաքացու** ներառումը առողջության համընդհանուր ապահովագրության համակարգում:

Առողջության համընդհանուր ապահովագրությունը համակարգ է, որն ապահովում է բոլոր շահառուների հասանելիությունը ապահովագրական փաթեթում ներառված բժշկական ծառայություններին և դեղերին: Հիմնական ֆինանսավորման աղբյուրներն են վարձու աշխատողների և ԱՁ–ների կողմից վճարվող ապահովագրավճարները և պետական բյուջեն:

Համակարգի առաջնային նպատակներն են՝

- Ֆինանսական պաշտպանվածության բարձրացման միջոցով առողջապահական ծառայություններին հասանելիության ապահովումը, մարդկանց կողմից գրպանից դուրս կատարվող ծախսերի կրճատումը:
- Առողջապահական ծառայությունների կայուն ֆինանսավորման համակարգի ստեղծումը:
- Առողջությանը հետևելու վարքագծի ձևավորումը:

- Երկարաժամկետ կտրվածքով համակարգը կնպաստի նաև բնակչության առողջության պահպանմանը, կյանքի միջին տևողության երկարաձգմանը, հաշմանդամությամբ ընթացող տարիների, վաղաժամ մահացության նվազեցմանը և կյանքի որակի բարելավմանը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6 ամիսների ընթացքում ապահովագրված անձանց թիվն աճել է 14.3%-ով կամ 225,168 անձով՝ կազմելով 1,799,387 անձ:

Հիմնական ավելացումը պայմանավորված է 200,001-500,000 ՀՀ դրամ եկամուտ ունեցող անձանց՝ տարեսկզբի համեմատ 31% աճով:

1,799,387

Շահառու

762,404

Ծառայությունից օգտված շահառու, կամ յուրաքանչյուր 2-րդը: Միայն դեղերից օգտվել են **35,961** շահառու:

Մեկ շահառուի հաշվով միջին ծախս՝ առանց դեղորայքի ծախսերի



Ծառայություններից օգտված շահառուներ, ովքեր նախկինում չեն օգտվել որևէ պետական առողջապահական ծառայություններից



ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրական փաթեթում ընդգրկված 2,882 անուն ծառայություններից շահառուները օգտվել են 2,553-ից:

2,882

Ծառայություն

102,4 մլրդ

ՀՀ դրամ փոխհատուցում

Օգտագործված ծառայությունների քանակը



Կատեգորիա	Գումար	%
Այլ հիվանդանոցային ծառայություն	23,9 մլրդ	23.36%
Դեղորայք	14.5 մլրդ	14.18%
Ախտորոշիչ հետազոտություններ	12.6 մլրդ	12.29%
Սիրտ-անոթային վիրաբուժություն	12.5 մլրդ	12.19%
Թերապիա	11.7 մլրդ	11.39%
Առողջության առաջնային պահպանման ծառայություններ	8.6 մլրդ	8.39%
Այլ (վիրահատական միջամտություններ, ներառյալ՝ 17,848 կատարակտի վիրահատություն, 1,150 կոնքազդրային հոդի վիրահատություն)	4.6 մլրդ	4.48%
Դեղորայքային թերապիա (Քիմիաթերապիա)	2.8 մլրդ	2.71%
Հեմոդիալիզ	2.2 մլրդ	2.19%
Վիրահատական բուժում (ուռուցքաբանություն)	1.9 մլրդ	1.83%
Շտապօգնություն	1.8 մլրդ	1.78%
Ճառագայթային բուժում	1.0 մլրդ	1.01%
Ինֆեկցիոն ծառայություններ, ներառյալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ և տուբերկուլյոզային բուժօգնություն	999 մլն	0.98%
Հոգեբուժական ծառայություններ	908 մլն	0.89%
Ծննդօգնություն	744 մլն	0.73%
Էնդովասկուլյար վիրաբուժություն	740 մլն	0.72%
Ստոմատոլոգիա	595 մլն	0.58%
Այլ ուռուցքաբանական ծառայություններ	186 մլն	0.18%
Կանխարգելիչ հետազոտություններ և սքրինինգներ	128 մլն	0.12%

6 ամիսների ընթացքում գրանցվել է դեղերի ստացման 1,196,434 դեպք՝ 388,658 շահառուների կողմից:



Դուրս է գրվել 2,613,263 դեղատոմս, ընդ որում, դրանց թիվը հունվար ամսվա համեմատ աճել է շուրջ 3 անգամ:



Հունիս ամսվա դրությամբ փոխհատուցվող դեղերի ցանկում առկա է եղել 1,339 առևտրային անվանում դեղամիջոց, որից փաստացի դուրս է գրվել 1,160-ը:



ԱՄԵՆԱՇԱՏ ՆՇԱՆԱԿՎՈՂ ԴԵՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԽՄԲԵՐԻ



Ընդամենը՝ 14,5 մլրդ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Դեպքեր՝
7.81 մլն

Վնասաբերություն՝
88%

Ապահովագրվածներ՝
1.8 մլն

Ծառայություն ստացած շահառուներ՝
762,404

1 ապահովագրվածի միջին փոխհատուցում՝
56,941

65+ տարիքային խմբում ծախսը կազմում է 57 մլրդ ՀՀ դրամ, ինչը 4 անգամ ավել է, քան 0-17 տարիքային խմբում, և գրեթե 2.5 անգամ ավել է, քան 18-64 տարիքային խմբում:

Մեկ շահառուի հաշվով միջին ծախսն ըստ տարիքային խմբի



Օգտվողների դիմումների բաշխումն ըստ սեռի



Դիմելիությունն ըստ տարիքային խմբերի



ԱՄԵՆԱՀԱՃԱԽ ՓՈԽՀԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐ

Ամբուլատոր	
Բժշկական և ամբուլատոր խորհրդատվություններ	7,9 մլրդ ֏
Թերապիա	11,7 մլրդ ֏
Ախտորոշիչ հետազոտություններ	12,6 մլրդ ֏

Վիրահատություններ	
Սրտի և անոթների ստենտավորումներ	6,3 մլրդ ֏
Կատարակտի վիրահատություններ	5,5 մլրդ ֏
Կարդիովերտեր-դեֆիբրիլյատորի իմպլանտացիա	2,5 մլրդ ֏

Հեմոդիալիզ	2,2 մլրդ ֏
Շտապօգնություն (ներառյալ սանիտարական ավիացիա)	1,8 մլրդ ֏
Քիմիաթերապիա	2,8 մլրդ ֏

ԱՄԵՆԱՀԱՃԱԽ ՓՈԽՀԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանում	Դեպք	Պացիենտ	Գումար	%
Ախտորոշիչ հետազոտություններ	2,5 մլն	456,713	10,5 մլրդ	10.27
Այլ	1,0 մլն	458,695	11,6 մլրդ	11.37
Անհետաձգելի կարճատև հոսպիտալացում (էմերջենսի)	149,855	89,665	2,2 մլրդ	2.15
Անոթանեյրովիրա-բուժություն	789	483	791 մլն	0.77
Առողջության առաջնային պահպանման ծառ.	576,096	359,681	4,2 մլրդ	4.14
Դեղորայք	3,7 մլն	388,658	14,5 մլրդ	14.17
Թերապիա	71,980	54,340	10,3 մլրդ	10.11
Ինտերվենցիոն սրտաբանական	17,651	14,933	7,0 մլրդ	6.86
Ինտերվենցիոն առիթմոլոգիական	1,122	1,095	3,2 մլրդ	3.14
Ծննդօգնություն	17,240	6,585	730 մլն	0.71
Կանխարգելիչ հետազոտ. և սքրինինգներ	16,315	9,350	10,9 մլն	0.01
Կրծքային վիրաբուժություն	1,525	1,152	403 մլն	0.39
Հեմոդիալիզ	101,837	1,758	2,2 մլրդ	2.19
Նյարդավիրաբուժություն	1,657	1,218	634 մլն	0.62
Շտապօգնություն	158,068	102,610	1,8 մլրդ	1.78
Ուռուցքաբանական	47,277	9,011	5,6 մլրդ	5.53
Սիրտ-անոթային վիրաբուժություն	4,373	2,609	1,5 մլրդ	1.53
Ստոմատոլոգիա	78,974	18,637	595 մլն	0.58
Սրտային վիրաբուժություն	749	634	1,8 մլրդ	1.80
Սքրինինգային ծրագրեր	74,238	48,495	120 մլն	0.12
Վիրաբուժություն	120,644	75,250	20,1 մլրդ	19.62
Օրթոպեդիական	5,503	3,722	2,20 մլրդ	2.14

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐ

Ամենափոքր փոխհատուցումը մեկ շահառուին՝

6,000 Դ

Ամենամեծ փոխհատուցումը մեկ շահառուին՝

10,1 մլն Դ

Շահառուների քանակն ըստ փոխհատուցման գումարի շեմերի



ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ



Շիրակ
Շահառու՝ 69,460
Ծառայություն՝ 233,230
Հատուցում (մլրդ)՝ 2.40
Հատուցում (%)՝ 2.34%

Լոռի
Շահառու՝ 43,898
Ծառայություն՝ 191,058
Հատուցում (մլրդ)՝ 1.79
Հատուցում (%)՝ 1.75%

Տավուշ
Շահառու՝ 20,880
Ծառայություն՝ 89,557
Հատուցում (մլրդ)՝ 0.63
Հատուցում (%)՝ 0.62%

Ararat
Շահառու՝ 17,606
Ծառայություն՝ 61,657
Հատուցում (մլրդ)՝ 0.50
Հատուցում (%)՝ 0.49%

Գեղարքունիք
Շահառու՝ 32,306
Ծառայություն՝ 134,276
Հատուցում (մլրդ)՝ 1.24
Հատուցում (%)՝ 1.21%

Կոտայք
Շահառու՝ 9,150
Ծառայություն՝ 53,878
Հատուցում (մլրդ)՝ 0.36
Հատուցում (%)՝ 0.35%

Արմավիր
Շահառու՝ 48,794
Ծառայություն՝ 291,746
Հատուցում (մլրդ)՝ 2.05
Հատուցում (%)՝ 2.00%

Երևան
Շահառու՝ 43,185
Ծառայություն՝ 189,605
Հատուցում (մլրդ)՝ 1.03
Հատուցում (%)՝ 1.00%

Արարատ
Շահառու՝ 688,492
Ծառայություն՝ 6,808,194
Հատուցում (մլրդ)՝ 78.43
Հատուցում (%)՝ 76.54%

Վայոց Ձոր
Շահառու՝ 37,258
Ծառայություն՝ 145,662
Հատուցում (մլրդ)՝ 0.93
Հատուցում (%)՝ 0.91%

Սյունիք
Շահառու՝ 25,972
Ծառայություն՝ 112,860
Հատուցում (մլրդ)՝ 0.90
Հատուցում (%)՝ 0.88%

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ԲԿ-ներ
և գյուղական
բժշկական
ամբուլատորիաներ՝
424



Երևան	103	Շիրակ	33
Արարատ	62	Տավուշ	26
Կոտայք	45	Արագածոտն	23
Գեղարքունիք	39	Սյունիք	22
Լոռի	33	Վայոց Ձոր	5
Արմավիր	31		

Դեղատներ՝
1,417



Երևան	674		
Կոտայք	127	Գեղարքունիք	64
Արարատ	104	Սյունիք	50
Արմավիր	105	Տավուշ	46
Լոռի	98	Արագածոտն	38
Շիրակ	97	Վայոց Ձոր	14

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Առանձին ստոմատոլոգիական կլինիկաներ՝ **44**



Երևան	17		
Լոռի	5	Գեղարքունիք	3
Շիրակ	4	Տավուշ	3
Արարատ	4	Արմավիր	3
Կոտայք	3	Արագածոտն	2

Առանձին լաբորատորիաներ՝ **72**



Երևան	33		
Շիրակ	7	Արարատ	4
Կոտայք	6	Սյունիք	4
Արմավիր	6	Տավուշ	2
Լոռի	5	Արագածոտն	1

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1,2 մլն
Դեղերի տրամադրման դեպքեր

2,6 մլն
Դեղատոմս

2,5 մլն
Իրականացված հետազոտություններ

8,2 մլն
Մատուցված ծառայություններ և տրամադրված դեղեր

762,404
Սպասարկված ապահովագրվածներ

142,550
Վիրահատություններ

88,580
Վիրահատվածներ

Հիմնադրամի գործունեության կարևոր ուղղություններից է կանխարգելիչ առողջապահական ծրագրերի ներդրումն ու զարգացումը՝ **հիվանդությունների վաղ հայտնաբերման, առողջական ռիսկերի գնահատման և բնակչության առողջության պահպանման նպատակով**:

Ծրագրերի իրականացմանը զուգահեռ հիմնադրամն իրականացնում է նաև իրազեկման աշխատանքներ՝ բարձրացնելու բնակչության տեղեկացվածությունը կանխարգելիչ հետազոտությունների կարևորության վերաբերյալ:



Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել են արգանդի պարանոցի քաղցկեղի և կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային ծրագրերը, ինչպես նաև Սյունիքի մարզում իրականացվող մեծահասակների կանխարգելիչ հետազոտությունների և երեխաների տեսողության սքրինինգի պիլոտային ծրագրերը: Սքրինինգների արդյունքում հայտնաբերված շեղումները և հետագա շարունակական բուժօգնությունը փոխհատուցվում են ապահովագրական փաթեթի շրջանակներում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՈՒՆ

Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամը շարունակել է սերտ համագործակցությունը ՀՀ առողջապահության նախարարության, բժշկական մասնագիտական ասոցիացիաների, ինչպես նաև միջազգային և մասնավոր հատվածի գործընկերների հետ՝ առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի արդյունավետ ներդրումն ու զարգացումն ապահովելու նպատակով: Մասնագիտացված ասոցիացիաների հետ համագործակցությունը միտված է ծառայությունների փաթեթի, դրանց գների, ինչպես նաև բուժանձնակազմի վարձատրության հետ կապված ծախսերի վերաբերյալ քննարկմանը և փոփոխությունների պլանավորմանը:

Հիմնադրամը շարունակաբար ներգրավված է առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի կարգավորումների, ծառայությունների փաթեթի, որակի ապահովման մեխանիզմների և շահառուների սպասարկման գործընթացների կատարելագործմանն ուղղված աշխատանքներում՝ սերտ համագործակցելով ոլորտային մասնագիտական կառույցների և փորձագիտական համայնքի հետ:

Պետություն-մասնավոր համագործակցության ամրապնդման շրջանակում հիմնադրամը համագործակցության հուշագիր է ստորագրել ապահովագրական ընկերությունների հետ:

Հուշագրի շրջանակում կողմերը համագործակցում են առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի զարգացման և առողջապահական ծառայությունների որակի բարձրացման ուղղությամբ՝ պարբերաբար փոխանակելով տեղեկատվություն և քննարկելով ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Համագործակցությունը միտված է շահառուների սպասարկման գործընթացների բարելավմանը և մասնավոր ապահովագրական փաթեթների հասանելիության ապահովմանը:

Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամը շարունակել է զարգացնել աշխատակիցների մասնագիտական կարողությունները: Այս ընթացքում հիմնադրամի ներկայացուցիչները մասնակցել են Առողջապահության համաշխարհային կազմակերպության և Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված **«Առողջապահության ֆինանսավորում առողջապահական համընդհանուր ծածկույթի համար»** թեմայով եռօրյա վերապատրաստման ծրագրին:

Դասընթացի ընթացքում ներկայացվել են առողջապահության ֆինանսավորման ոլորտում միջազգային լավագույն փորձը, ռազմավարական գնումների, պետական ծախսերի արդյունավետության, առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի շրջանակներում առողջության առաջնային պահպանման ֆինանսավորման ժամանակակից մոտեցումները:

Ծրագիրը հնարավորություն է տվել ամրապնդել առողջապահության ֆինանսավորման քաղաքականության մշակման, իրականացման և գնահատման ոլորտում մասնագիտական կարողությունները:

Շարունակվել է նաև միջազգային փորձի ուսումնասիրությունը: Քննարկվել և կիրառման տեսանկյունից գնահատվել են Կորեայի Հանրապետությունում իրականացվող առողջության համընդհանուր ապահովագրության, ծառայությունների որակի ապահովման և թվային առողջապահության ոլորտներում կիրառվող մեխանիզմները: **Ուսումնասիրվել են ապահովագրական փաթեթների ձևավորման, ծառայությունների և դեղորայքի գնագոյացման, վճարային համակարգերի, ազգային սքրինինգային ծրագրերի և մոնիթորինգի թվային գործիքները, որոնք կարող են նպաստել Հայաստանում առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի հետագա կատարելագործմանը:**

Միջազգային գործընկերների հետ համագործակցությունը և մասնագիտական վերապատրաստումները կարևոր դեր ունեն հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման և առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի արդյունավետ կառավարման գործում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԻ՝ ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Առաջիկա տարիներին շարունակվելու է առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի փուլային ընդլայնումը՝ ապահովագրության շրջանակում ներառելով բնակչության նոր խմբեր: Համակարգի զարգացման ռազմավարական նպատակն է **մինչև 2029 թվականը** ապահովագրական ծածկույթում ընդգրկել Հայաստանի Հանրապետության ողջ բնակչությանը՝ ձևավորելով առողջապահական ծառայությունների հասանելի, արդար և ֆինանսապես կայուն համակարգ:

Այս նպատակին հասնելու համար **շարունակվելու են ծառայությունների փաթեթների ընդլայնման և բարելավման, որակի կառավարման, կանխարգելիչ ծրագրերի զարգացման և նոր լուծումների ներդրման աշխատանքները**՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը:

ԱՌՈՂՋ.am

Առողջության համընդհանուր
ապահովագրության հիմնադրամ

UHIF.AM